

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԵՐՊՈՎ ԳՈՐԾԱԾԵԼ ԺԱՄԱՆԱԿԸ

Կյանքի ամենադժվար հարցերի պատասխանները - Մաս 3
«Ո՛վ գիտե թե ինչն է լավ մարդիս համար կյանքի մեջ.» Ժող 6:12

Ա- Ընդունել, որ Աստված որոշակի նպատակ ունի իմ կյանքի լավ և վատ ժամանակահատվածների համար

«Ամեն բանի ժամանակ կա. և ժամանակ երկնքի տակի բոլոր ձեռնարկության.» Ժողովող 3:1

Դրական և	Բացասական
Ծնվել	Մեռնել
Տնկել	Արմատախիլ անել
Բուժել	Սպանել
Կառուցել	Քանդել
Ծիծաղել	Լաց լինել
Պարել	Ողբալ
Հավաքել	Ցրել
Գրկել	Վանել
Փնտրել	Հուսահատվել
Պահել	Թափել
Նորոգել	Պատռել
Խոսել	Լռել
Միրել	Ատել
Խաղաղություն	Պատերազմ

«Նա ամեն բան արել է վայելուչ իր ժամանակին...» Ժողովող 3:11

Բ- Շփոթության մեջ հաստատ մնալ Աստծո վրա ունեցած հավատքի մեջ

«...հավիտենականությունը դրել է նրանց սրտերումը, բայց այնպես որ մարդս չի կարող ըմբռնել Աստծո արած գործերը գլխիցը մինչև ծայրը.» Ժողովող 3:11բ

«(Հիսուս) Ինչ որ ես անում եմ դու հիմա չես իմանում, բայց սրանից հետո կիմանաս.» Հովհաննես 13:7

«Այդ պատահեց որպեսզի մենք սովորենք ինքներս մեզ չապավինենք, այլ Աստծուն...» Ա Կորնթացիս 1:9

Գ- Օգտագործել ներկա ժամանակը լավ բաներ անելու համար
«Իմացել եմ որ նրանցում մի ավելի լավ բան չկա քան թե լավությունն անելը իր կյանքում.» Ժողովող 3:12

«Ստեղծված ենք կատարելու համար այն բարի գործերը, որոնց համար Աստված սկզբից պատրաստեց մեզ.» Եփեսացիս 2:10

«Բարությունը մի խնայիր որին որ կվայելե, երբոր ձեռքումդ գորություն կա անելու.» Առակաց 3:27

«Քամիին մտիկ անողը սերմը չի ցանի, և ամպերին նայողը չի հնձի.» Ժողովող 11:4

Դ- Իմ ողջ ժամանակը ընդունել որպես Աստծո պարգև

«Ամեն մարդ ուտում խմում է և իր բոլոր աշխատանքը վայելում. դա Աստծո պարգևն է.» Ժողովող 3:13

«Եթե մարդս շատ տարիներ էլ ապրի, նրանցում թող ուրախանա.» Ժողովող 11:8

«Ես սովորել եմ՝ ինչի մեջ որ կամ, նրանով բավարարել.» Փիլիպպեցիս 4:11

Ե- Իմանալ, որ պետք է հաշվետու լինեմ Աստծուն իմ ժամանակի Համար

«...Աստված կորոնե անցկացածը.» Ժողովող 3:15

«Ես ասեցի իմ սրտումը, արդարին և ամբարիշտին Աստված է դատում. որովհետև ամեն ձեռնարկության ժամանակ կա, և ամեն բանի համար որ լինում է այնտեղ.» Ժողովող 3:17

«Բոլորս էլ կանգնելու ենք Քրիստոսի ատյանի առաջ.» Հռովմայեցիս 14:10

«Ուշադրություն դարձրեք ձեր ապրելակերպին, մի ապրեք անմտորեն այլ իմաստունների նման: Օգտագործեցեք ժամանակը, քանզի այս օրերը չար են.» Եփեսացիս 5:15-16

Հաջորդ Քարոզի Թեման
«Ինչո՞ւ է Կյանքը Անարդար»
Հովիվ Սարո Խաչիկեան